ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

2018 թվականի մայիսի 2-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 10-րդ <<Ա>> դասարանի ծնողական ժողովը:

Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Ա. Հարությունյանը :

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Առաջադիմությանը վերաբերող հարցեր:

2. Կարգապահական խնդիրներին վերաբերող հարցեր:

Լսեցին.

1. Առաջադիմությանը վերաբերող հարցեր:

Ելույթ ունեցավ դասղեկ Ա. Հարությունյանը՝ իր դժգոհությունն արտահայտելով աշակերտների առաջադիմության վերաբերյալ: Դասղեկը նշեց, որ որոշ աշակերտներ դասերին ներկայանում են ոչ լիարժեք պատրաստված և ցուցաբերում են անտարբեր վերաբերմունք առարկաների հանդեպ: Դասղեկ Ա. Հարությունյանը ընդգծեց, որ դասարանում թույլ ընդունակություններ ունեցող, անկարող աշակերտներ չկան, բայց ափսոսանք հայտնեց, որ նրանք լիարժեք չեն օգտագործում իրենց ունակությունները:Դասղեկը հիշեցրեց,որ շուտով ավարտվելու է երկրորդ կիսամյակը ,աշակերտները գրելու են կիսամյակային ամփոփիչ գրավոր աշխատանքները և անհրաժեշտ է ,որ աշակերտները դասերին ներկայանան պատրաստված,տնային հանձնարարությունները կատարած և դասերից չբացակայեն:

Որոշեցին.

Ծնողները որոշեցին մեծ ուշադրություն դարձնել, որ աշակերտները դպրոց հաճախեն դասերը պատրաստած և հետևողական լինեն, որ աշակերտների առաջադիմության որակը բարձրանա:

Լսեցին

2. Կարգապահական խնդիրներին վերաբերող հարցեր:

Դասղեկ Ա. Հարությունյանը անդրադարձավ դասարանի կարգապահական խնդիրներին, սովորողների պահվածքին դասաժամերին և դասամիջոցներին: Նշեց, որ հատկապես տղաների շրջանում նկատվում է ակտիվություն: Երբեմն միջանձնային հարաբերություններում նկատվում են կոնֆլիկտներ, որոնք հարթվում են դասղեկի, ուսուցիչների և հոգեբանի հետ զրույցների միջոցով: Ա. Հարությունյանը կարևորեց դասարանի գույքի նկատմամբ հոգատար վերաբերմունքը :Ա. Հարությունյանը հորդորեց ծնողներին հետևողական լինել իրենց երեխաների նկատմամբ, վերահսկել նրանց արարքները, անցանկալի երևույթների դեպքում դիմել նաև դասղեկին՝ միասին իրավիճակը շտկելու համար:

Որոշեցին.

Ծնողների և դասղեկի համատեղ աշխատանքի շնորհիվ լուծել սովորողների կարգապահական խնդիրները:

Ծնողական խորհրդի նախագահ՝ / / Լուսինե Մովսիսյան

Քարտուղար՝ / / Նվարդ Եպիսկոպոսյան